ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Երևանի ոսկերչական գործարանի նախկին տնօրեն Էմիլ Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Արշակունյաց պողոտայի հ.12 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Էմիլ Գրիգորյանը ծնվել է 1938 թ. Երեւանում: 1955 թ. ոսկե մեդալով ավարտել է Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, իսկ 1960թ-ին՝ Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը: Աշխատանքային գործունեությունն սկսել է դեռևս բուհական նստարանից՝ Երեւանի ոսկերչական գործարանում աշխատելով որպես տեխնոլոգ-նորմավորող: 1964 թ. Էմիլ Գրիգորյանը նշանակվել է Երեւանի «Ալմաստ» գործարանի փորձարարական լաբորատորիայի վարիչ: Նվիրումն ու ջանքերն աննկատ չմնացին. 2000 տ մամլիչների վրա խոշոր ալմաստահատիկների սինթեզման տեխնոլոգիական գործընթացների մշակման եւ ներդրման համար 1980թ. Էմիլ Գրիգորյանն արժանացավ ՀՀ պետական մրցանակի եւ նշանակվեց ձեռնարկության գլխավոր ինժեներ: 1983 թ. նրան վստահում են ղեկավարել Երևանի ոսկերչական գործարանը: Որպես արտադրության ինքնուրույն խոշոր սուբյեկտի ղեկավար՝ այստեղ արդեն լիարժեք են դրսևորվում նրա մասնագիտական կարողությունները եւ կոլեկտիվի հետ աշխատելու համար անհրաժեշտ մարդկային բարձր հատկանիշները: Շուրջ 2000 անդամ ունեցող արտադրության հետագա 12 տարվա կայուն աճը վկայում է Էմիլ Գրիգորյանի կազմակերպչական ձիրքի առավելությունների մասին: Առավել ընդգծելի է այն փաստը, որ մեր հանրապետության անկախության առաջին, խիստ ծանր ու բարդ տարիներին նրա ղեկավարած կոլեկտիվը ոչ միայն չթուլացրեց տեմպերը, այլեւ արտադրական ավելի բարձր բնագծերի հասավ՝ 1994թ-ին գրանցելով իր պատմության ընթացքում ամենաբարձր ցուցանիշը: Հանրապետության համար 1990-2000-ականների սկզբին, ծանր, մութ և ցուրտ տարիներին, գործարանն օգնության ձեռք մեկնեց կառավարությանը և անհատույց վճարեց Թուրքմենիայից ստացվող գազի պետական պարտքը՝ ավելի քան 10 մլն ԱՄՆ դոլար: 1990-ական թվականների սկզբին գործարանն ստեղծեց ոսկերչական 17 փոքր ձեռնարկություն Հայաստանում ու Արցախում՝ հաշվի առնելով բնակչության զբաղվածության խնդիրը, ոլորտի հեռանկարային և մեր ժողովրդի համար ավանդական լինելը: Այդ դժվարին տարիներին ավելի քան 2000 մարդ ապահովվեց աշխատանքով: Սակայն 1990-ականների կեսերին տեղի ունեցավ գործարանի ղեկավարության փոփոխություն, ինչի հետևանքով արդեն երկու տարի անց գործարանը հայտնվեց կազմալուծման եզրին: 1995-97 թթ. Էմիլ Գրիգորյանն աշխատանքի էր անցել Մոսկվայի «Յուվելիրպրոմ» ձեռնարկությունում՝ որպես գործադիր տնօրեն: 1997 թ. հուլիսից նրան առաջարկվում է վերադառնալ և կրկին ստանձնել գործարանի ղեկավարությունը: Նա ընդունեց առաջարկը, վերադարձավ և ստիպված եղավ սկսել… զրոյից: Ամենաառաջնային եւ անհետաձգելի խնդիրն էր վերականգնել ձեռնարկությունը, նրա դիրքերն ավանդական շուկաներում և հայթայթել արտադրանքի իրացման նոր շուկաներ: Այդ ժամանակ Էմիլ Գրիգորյանը սկիզբ դրեց «ԳՆՈՄՈՆ» ֆիրմային նշանով

ժամացույցների արտադրությանը, «ԳՆՈՄՈՆ» ֆիրմային նշանն արտոնագրվեց Հայաստանում, Ռուսաստանում, Շվեյցարիայում, Գերմանիայում և մի շարք այլ երկրներում: 1998թ. Էմիլ Գրիգորյանի նախաձեռնությամբ և ջանքերով ստեղծվեց Հայաստանի ոսկեգործների և ադամանդագործների միությունը, որի խնդիրն էր համախմբել Հայաստանի և բոլոր հայ ոսկերիչներին ու ադամանդագործներին: Համախմբման նպատակն էր միավորել ինտելեկտուալ եւ տեխնոլոգիական ներուժը ոսկեգործության, ադամանդագործության, ժամագործության, մարկետինգի և նոր տեխնոլոգիաների բնագավառներում, ստեղծել որակյալ կադրեր և մեր ոսկերչական հարուստ ավանդույթներն աշխարհին ներկայացնել հավուր պատշաճի: Անհրաժեշտ է հատուկ նշել կադրերի ստեղծման հարցում իր ուրույն տեղն ունեցող գործարանի բազայի վրա ստեղծված և միշտ Էմիլ Գրիգորյանի ուշադրության կենտրոնում գտնվող 6-ամսյա դպրոցը, որն իր գոյության տարիների ընթացքում տվել է բազմաթիվ շնորհալի շրջանավարտներ, որոնցից շատերն աշխատում են գործարանում, մի մասն այլ ձեռնարկություններում, ոմանք Հայաստանից դուրս՝ այլ երկրներում: Չնայած այս ամենին, Էմիլ Գրիգորյանը տարիներ շարունակ մտածել է նաեւ մեծ միջազգային ուսումնական կենտրոնի ստեղծման մասին, այդ նպատակով արվել էին այդ կենտրոնի նախագիծը, շինարարական աշխատանքների նախահաշիվը: Այս ուսումնական կենտրոնում հնարավոր կլինի համախմբել համայն հայության շնորհալի զավակներին, որոնք իրենց մասնագիտական կրթությունը կստանան պատմական հայրենիքում, կհաղորդակցվեն հայ ոսկերչության ավանդույթներին: Միջազգային ուսումնական կենտրոնում հատուկ ուշադրության են արժանանալու ոսկերչական դիզայնի և ժամագործության ուսուցման ուղղությունները: Էմիլ Գրիգորյանի նախաձեռնությամբ, սկսած 1998թ-ից, Հայաստանի ոսկեգործների և ադամանդագործների միությունը մեծ հաջողությամբ կազմակերպել և անցկացրել է տարածաշրջանում եզակի ամենամյա միջազգային ոսկերչական «Ոսկեգործություն» տոնավաճառը: Այդ տոնավաճառների շնորհիվ Հայաստանի փոքր ձեռնարկատերերը և անհատ արտադրողները կարողացան շփման հնարավորություն ստանալ օտարերկրյա հզոր ձեռնարկությունների հետ, կապեր հաստատելու, համագործակցելու, կնքելու փոխշահավետ պայմանագրեր: Էմիլ Գրիգորյանն իրականացրել է բազմաբնույթ բարեգործական գործունեություն՝ օգնություն առողջապահական խնդիրներ ունեցողներին, օգնություն ազատամարտիկներին և զոհված ազատամարտիկների ընտանիքներին, մշակութային բազմաթիվ միջոցառումների հովանավորում, օգնություն շնորհալի ուսանողներին ուսման վարձի վճարման հարցում, մի շարք գրքերի տպագրության հովանավորություն: Անգնահատելի է Էմիլ Գրիգորյանի դերը ոլորտի զարգացման գործում: Աշխատանքային ավելի քան 50 տարվա ընթացքում նա իր մեծագույն ավանդն է ներդրել Հայաստանում այս ճյուղի և մասնավորապես Երևանի ոսկերչական և «Ալմաստ» գործարանների կայացման ու զարգացման գործում: Իր հայրենանվեր գործունեության համար 2002թ. ՀՀ նախագահի հրամանագրով պարգեւատրվել է հայրենիքի բարձր պարգևով՝ «Անանիա Շիրակացի» շքանշանով, իսկ 2011թ.՝ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով:

Էմիլ Գրիգորյանը մահացել է 2022թ. սեպտեմբերի 19-ին:

Էմիլ Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Արշակունյաց պողոտայի հ.12 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարանի տնօրեն Տիգրան Երոյանի կողմից: Հուշատախտակի պատրաստման և տեղադրման ֆինանսական ծախսերը կատարելու է «Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական Գործարան» ԲԲ ընկերությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**